

Հավելված

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի  
նախագահի 2023 թվականի հունիսի  
23 -ի N 594 -Լ հրամանի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

REPUBLIC OF ARMENIA

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵ**

CIVIL AVIATION COMMITTEE

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՓԱՐԹ-147 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ  
ՁԵՌՆԱՐԿ**

PART-147 MAINTENANCE TRAINING ORGANIZATION APPROVA MANUAL

ԵՐԵՎԱՆ - 2023

## ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Սույն փաստաթղթում նկարագրված են Տեխնիկական սպասարկման ուսումնական կազմակերպությունների վավերացման և համապատասխանության պահպանման Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գործառույթները ըստ Գլխավոր վարչության պետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 181-Ն հրամանով ուժի մեջ մտած Եվրահանձնաժողովի (EU) № 1321/2014 առ 26.11.2014 Օրենքի IV հավելվածի (Փարթ-147):

### **Այս փաստաթղթի նպատակն է՝**

Նկարագրել, թե ինչպես պետք է իրականացնի իր գործառույթները հայտատուն Փարթ-147 վավերացման հայտ ներկայացնելիս և ինչպես պետք է Կոմիտեն իրականացնի վերոհիշյալ կազմակերպության վավերացման սկզբնական ուսումնասիրությունը, շարունակականությունը, փոփոխությունը, սահմանափակումը, դադարեցումը կամ կասեցումը համաձայն 1321/2014 կարգի IV հավելված Փարթ-147-ի:

Փաստաթուղթը ներառում է նաև տեխնիկական հարցերի պարզաբանում:

Կոմիտեի և Հայտատուի միջև հաղորդակցությունը իրականացվում է հայերեն:

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ**

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ	ԹՎԱԿԱՆԸ	ՆՇՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԸ
00		

**ԳՈՐԾՈՂ ԷԶԵՐԻ ՑԱՆԿ**

ԷԶ	ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ	ԷԶ	ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ	ԷԶ	ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
1	00				
2	00				
3	00				
4	00				
5	00				
6	00				
7	00				
8	00				
9	00				
10	00				
11	00				
12	00				
13	00				
14	00				
15	00				
16	00				
17	00				
18	00				
19	00				
20	00				
21	00				
22	00				
23	00				
24	00				
25	00				
26	00				
27	00				
28	00				
29	00				
30	00				
31	00				
32	00				
33	00				
34	00				
35	00				
36	00				
37	00				

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b><u>ԲԱԺԻՆ Ա՝ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՎԱՎԵՐԱՑՈՒՄ</u></b>	<b><u>6</u></b>
Ա.1.- I ՓՈՒԼ՝ ՀԱՅՏ	6
Ա.2.- II ՓՈՒԼ՝ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	8
Ա.2.1.- Գործունեության ոլորտի գնահատումը	8
Ա.2.2.- Ձեռնարկների և կարգերի գնահատում	9
Ա.2.3.- Անհամապատասխանությունների որոշում և տեղեկացում	10
Ա.3.- III ՓՈՒԼ՝ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	12
Ա.4.- IV ՓՈՒԼ՝ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ և ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ	16
Ա.5.- V ՓՈՒԼ՝ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄ	18
<b><u>ԲԱԺԻՆ Բ՝ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ</u></b>	<b><u>18</u></b>
Բ.1.- I ՓՈՒԼ՝ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ	18
Բ.2.- II ՓՈՒԼ՝ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ	19
<b><u>ԲԱԺԻՆ Գ՝ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</u></b>	<b><u>23</u></b>
Գ.1.- I ՓՈՒԼ՝ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	23
Գ.2.- II ՓՈՒԼ՝ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ	25
Գ.3.- III ՓՈՒԼ՝ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ և ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ	26
<b><u>ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ԿԱՍԵՑՈՒՄԸ ԿԱՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ</u></b>	<b><u>27</u></b>
<b><u>Հավելված I: Ձևաթղթերի և ուղեցույց նյութերի ցուցակ.</u></b>	<b><u>29</u></b>

## **ԲԱԺԻՆ Ա՝ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՎԱՎԵՐԱՑՈՒՄ**

### **Ա.1.- ՓՈՒԼ 1՝ ՀԱՅՏ**

(ԹԱԵԳ, 147.A.15)

Հայտատուն պատասխանատու է ներկայացվող փաստաթղթերի ամբողջականության և սույն կարգի պահանջների համապատասխանության համար:

#### **1. Հայտի ստացումը**

- 1) Վավերացման կամ առկա վկայականի փոփոխման համար Հայտատուն Կոմիտե է ներկայացնում համապատասխան Դիմում և (147/Ձ/12) Հայտը:
- 2) Հայտի ձևաթղթում լրացվում է 12-րդ ձևով պահանջվող տեղեկատվությունը:
- 3) Վավերացման կամ վկայականի փոփոխության հայտը պետք է ներառի հետևյալ տեղեկությունը
  - ա) Հայտատուի գրանցված անվանումը և հասցեն,
  - բ) Վավերացում կամ վավերացման փոփոխություն պահանջող կազակերպության հասցեն,
  - գ) Վավերացման նախատեսված ոլորտը կամ ոլորտի վավերացման ենթակա փոփոխությունը,
  - դ) Հաշվետու կառավարչի անունը և ստորագրությունը,
  - ե) Հայտի թվականը:

Հայտը ուղեկցվում է պաշտոնական գրությունով՝ կից ներկայացնելով հետևյալ փաստաթղթերի փաթեթը՝

- 147/Ձ/4 Ձևերը,
- “Փարթ-147 Տեխսպասարկման ուսումնական կազմակերպության ձեռնարկ” ուղեցույցի համապատասխան ձևակերպված Ձեռնարկի (ՏՈՒԿՁ) նախնական տարբերակը,
- Դասընթացների հաստատման ձևաթղթերը,
- Դասընթացների նյութերը\*
- Յուրաքանչյուր հաստատվող դասընթացի քննական հարցաշարը

***Սկզբնական վավերացման դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հայտատուի կարգավիճակը հաստատող փաստաթղթերը:***

\* Դասընթացի նյութերը ներառում են ուսանողների նշումներն ու դասախոսների նյութերը (սլայդներ և այլն), որպեսզի Կոմիտեն հնարավորություն ունենա գնահատել դասախոսների կողմից փոխանցվող գիտելիքները և համոզվել, որ ուսանողների ինքնուրույն ուսուցման նշումները ընդունելի մակարդակի են:

*Ծանոթություն՝ Կոմիտեի կամ նշանակված վերահսկիչների ստացած փաստաթղթերը՝ ինչպիսիք են դասախոսների նշումները, չպետք է փոխանցվեն երրորդ կողմին: Վերահսկիչները պետք է նախազգուշացվեն գաղտնի և առևտրային տեղեկությունը երրորդ անձանց չփոխանցելու առնչությամբ:*

## 2. Կոմիտեի անձնակազմի նշանակում

(147.B.110)

(ա) Ստանալով հայտը և կից փաստաթղթերի փաթեթը Կոմիտեի կողմից նշանակում է սերտիֆիկացման խումբ՝

- Խմբի ղեկավարին (ԽՂ), որը հաշվետու է գործընթացի պլանավորման և ղեկավարման համար, ինչպես նաև պատասխանատու՝ հայտատուի հանդեպ
- Տեսուչ(ներ)՝ պատասխանատու աշխատանքներն իրականացնելու համար  
*Ծանոթություն՝ Փոքր կամ շատ փոքր կազմակերպության դեպքում ղեկավարի և տեսուչի դերը կարող է կատարել մեկ անձ:*

*Ծանոթություն. Նախքան տեսչության իրականացումը նշանակվող տեսուչը պետք է ունենա սերտիֆիկացման անցկացման համապատասխան հրաման: Անհրաժեշտության դեպքում գործընթացում կարող են ներգրավվել համապատասխան որակավորմամբ այլ տեսուչներ:*

## 3. Հայտի քննարկում և թերությունների վերացում

(147.B.110)

Սերտիֆիկացման խումբը՝

1. Ստուգում է Տեխսպասարկման ուսումնական կազմակերպության հայտի լրացման համապատասխանությունը 147/Ձ/12-ի պահանջներին
2. Ուսումնասիրում է Տեխսպասարկման ուսումնական կազմակերպության ձեռնարկը՝ նախապես համոզվելով, որ դրանում առկա են պատասխանատու կառավարչի հայտարարագիրը և որակի ապահովման ղեկավարի ստորագրությունը:
3. Ծանոթանում է ղեկավար անձնակազմի տվյալներին (147/Ձ/4) և հաշվեքննության զեկույցին:
4. Ստուգում է Կազմակերպության համապատասխանությունը Փարթ-147-ի պահանջներին:

Փաստաթղթերի ուսումնասիրման ընթացքում, եթե պարզվում է, որ դրանք ձևակերպված են ոչ պատշաճ կամ ոչ բավարար, հայտատուն տեղեկացվում է և պահանջվում է վերացնել թերությունները 15 օրը չգերազանցող ժամանակահատվածում՝ զգուշացնելով նրան, որ հակառակ դեպքում գործընթացը կդադարեցվի և կգրանցվի, որ հայտատուն հրաժարվել է իր հայտից:

(բ) Սկզբնական վավերացման հայտի դեպքում պետք է ներկայացվի կազմակերպության Որակի ապահովման ղեկավարի կողմից ստորագրված հայտարարագիր՝ հաստատելով, որ փաստաթղթերը, գործընթացները ուսումնական/քննական նյութերը, շինությունները և անձնակազմը՝ հայտի առումով, վերանայված ու ստուգված են և համապատասխանում են բոլոր կիրառելի պահանջներին:

(գ) Հայտնաբերված բոլոր թերությունները պետք է արձանագրվեն և գրավոր ներկայացվեն հայտատուին: Յուրաքանչյուր թերության վերացման թվականը պետք է արձանագրվի հղման փաստաթղթի հետ միասին: Բոլոր թերությունները պետք է վերացվեն մինչև վկայականի տրամադրումը:

#### 4. Տեղեկացման ժամկետը և ուսումնասիրության արդյունքները

Հայտի վրա ազդող բոլոր հնարավոր թերությունները հայտատուի կողմից վերացնելուց և սերտիֆիկացման խմբի անդամներին ծանոթացնելուց անմիջապես հետո հայտատուն տեղեկացվում է գործընթացի ժամկետների մասին՝ ներառյալ հետևյալ տեղեկությունը՝

- Տեղեկություն հայտի ստացման մասին
- Գործընթացի ավարտման առավելագույն ժամկետը՝ հայտը ստանալու թվականից սկսած մինչև 15 օր
- Հաշվեքննության անցկացման ծավալը և ժամկետները
- Գործընթացով զբաղվող խմբի ղեկավարի և անդամների անունները:

### Ա.2.- ՓՈՒԼ 2՝ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

#### Ա.2.1. Գործունեության ոլորտի գնահատում

(147.A.105, 147.A.130 (b), 147.A.140, 147.B.110, AMC 147.A.105(b) և (g))

Ոլորտի քննարկումը սկսվում է որպես Երկրորդ փուլի՝ “Փաստաթղթերի գնահատում”, առաջին քայլը:

#### 1. Ոլորտի ներկայացում

Հայտատուն պետք է 147/2/4-ի միջոցով ներկայացնի ներքոհիշյալ ղեկավար անձնակազմին և տեղեկություններ նրա վերաբերյալ՝

- Հաշվետու կառավարիչ
- Դասընթացների պատասխանատու
- Որակի համակարգի պատասխանատու
- Քննությունների պատասխանատու:
- Ծանոթություն 1՝ Հաշվետու կառավարչի և Դասընթացների պատասխանատուի պարտականությունները կարող են իրականացվել մեկ անձի կողմից:

Ծանոթություն 2՝ Համաձայն AMC 147. Ա 105 (2) փոքր կազմակերպություններում (50-ից պակաս ուսանողներ) վերոհիշյալ պարտականությունների համակցությունը կարող է իրականացվել մեկ անձի կողմից, եթե ընդունվում է, որ այդ անձը կարող է իր վրա վերցնել նշված պարտականությունները:

Հաշվետու կառավարչի համար 147/2/4 Ձևը լրացնելու անհրաժեշտություն չկա, քանի որ 147 կազմակերպության ձեռնարկը հաստատելիս նա հավանության է արժանանում:

Որպես պաշտոնական փաստաթուղթ ներկայացված անձնակազմի ձևաթղթերը տրամադրվում են սերտիֆիկացման խմբի ղեկավարին գնահատման համար:

#### 2. Հանդիպում ղեկավար անձնակազմի հետ (GM 147.B.110)

Հայտատուի ղեկավար անձնակազմի և Սերտիֆիկացման խմբի միջև պաշտոնական հանդիպման ընթացքում պարզաբանվում է, թե արդյոք հայտատուի Փարթ-147 վավերացման ուսումնասիրությունը հավաստիացնում է ուսումնական գործունեությունը և հաստատվում, որ



հայտատուն պատկերացնում է, թե ինչ է անհրաժեշտ անել Փարթ-147 վավերացան համար: Այդ հանդիպումը ավելի շատ նպատակ ունի պարզել, թե արդյոք գործունեությունը Փարթ-147 գործունեություն է, թե ոչ:

Հանդիպման նպատակն է նաև պարզաբանել հարցերը ինչպես Կոմիտեի, այնպես էլ հայտատուի ղեկավար անձնակազմի կողմից: Այդ ընթացքում ճշտվում է նաև գործընթացի ժամանակացույցը, ինչպես նաև գնահատվում ներկայացված ղեկավար անձնակազմի կողմից 1321/2014 կարգի 4-րդ հավելվածի լիարժեք ըմբռնումը:

**3. Անձնակազմի հաստատումը/ մերժումը**

Իրականացնելով անձնակազմի գնահատումը՝

- Լրացվում է 147/Ձ/4 ձևաթղթի ներքին մասը՝ պարտադիր պայմանների համապատասխանության ստուգումից հետո և համարվում է ընդունելի:
- Կազմվում է հաշվետվություն անձնակազմի համապատասխանության մասին:

Ստուգվում է պաշտոնների համատեղելիությունը, եթե տվյալ անձը զբաղեցնում է պաշտոններ տարբեր կազմակերպություններում:

**4. Հայտի անհամապատասխանությունների տեղեկացում**

Հայտի անհամապատասխանությունների տեղեկացման գործընթացը բերված է 3-րդ ենթափուլում՝ “Անհամապատասխանությունների հայտնաբերում և տեղեկացում”:

**Ա.2.2. Ձեռնարկների և գործընթացների գնահատում**

(147.A.140, 147.B.110)

“Ձեռնարկների և գործընթացների գնահատումը” կարող է իրականացվել 2.1 կետում նկարագրված անձնակազմի գնահատման գործընթացին զուգահեռ կամ դրա ավարտից հետո՝ ելնելով աշխատանքի ծավալից և տեսուչների առկայությունից:

Փուլն ավարտվում է “Անձնակազմի գնահատման” և “Ձեռնարկների ու գործընթացների գնահատումը” փուլերի վերաբերյալ հավանություն տալու կամ թերությունները շտկելու առաջարկով:

**1. Ձեռնարկների և գործընթացների բաշխումը Կոմիտեի խմբի անդամների միջև:**

Խմբի ղեկավարը բաշխում է փաստաթղթերի գնահատման առաջադրանքները խմբի անդամների միջև այնպես, որ վերջնական հաշվետվությունը լինի համասեռ և համապատասխանի սահմանված չափանիշներին:

**2. Ձեռնարկների և գործընթացների գնահատումը**

Գնահատման ենթակա փաստաթղթերը, որոնք մանրամասն նկարագրված են ստորև, պետք է վերլուծվեն հիմնվելով 147/Ձ/22 ձևաթղթի վրա (ԹԱԵԳ-ի 22-րդ ձև):

ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿ (ՏՈՒԿՁ)	Մաս 1	Կառավարում/Ղեկավարություն
	Մաս 2	Ուսուցման և քննությունների գործընթացներ
	Մաս 3	Որակի համակարգի գործընթացներ

	Մաս 4	Հավելվածներ
ՏՈՒԿՁ -ի հղման գործընթացներ	Այդ փաստաթղթերի հղումը ՏՈՒԿՁ -ի վրա պետք է հստակ նշված լինի	

Սկզբնական վավերացման համար պետք է գնահատվեն ՏՈՒԿՁ-ի բոլոր կետերը, ներառված բոլոր փաստաթղթերը, որոնք ըստ Փարթ-147-ի պահանջվում են և կարող են լինել Ձեռնարկից առանձնացված փաստաթղթով:

### **Ա.2.3. Անհամապատասխանությունների որոշում և տեղեկացում՝ (147.B110(b))**

#### **1. Անհամապատասխանությունների տեղեկացում խմբի ղեկավարին**

Խմբի անդամները տեղեկացնում են ղեկավարին փաստաթղթերի գնահատման ավարտի մասին: Հավանության ներկայացված ցանկացած անձի անհամապատասխանությունները պետք է արտացոլվեն 147/Ձ/4-ում և հայտնվեն ղեկավարին:

#### **2. Հայտատուի տեղեկացումը անհամապատասխանությունների մասին**

Խմբի ղեկավարը տեղեկացնում է հայտատուին նշված թերությունների մասին, որոնք կարող են վերացվել գործընթացով վերահսկվող ժամանակահատվածում՝ կցելով այն անձերի 147/Ձ/4-երի պատճենները, ովքեր չեն ընդունվել Կոմիտեի կողմից, հայտնելով այդ թերությունների վերացման անհրաժեշտության մասին վերոհիշյալ տեղեկացման թվականից հաշված 15 օրը չգերազանցող ժամանակահատվածում, և զգուշացնելով, որ դրա ուշացումը կարող է կասեցնել գործընթացը:

#### **3. Թերությունների շտկում և շտկված փաստաթղթերի ներկայացում**

Հայտատուն պետք է ներկայացնի շտկումները և կից շտկված փաստաթղթերը (ներառյալ պատասխանատու անձերի նշանակման առաջարկությունները) հատկացված ժամանակահատվածում:

Ղեկավարը այդ փաստաթղթերը ստանալիս դրանք բաշխում է խմբի անդամների միջև կամ տեղեկացնում է ժամկետն անցնելու մասին:

Խմբի անդամները գնահատում են ստացված տեղեկությունը և հայտնում են ԽՂ-ին, համապատասխանության մասին: ԽՂ-ն մուտքագրում է յուրաքանչյուր շտկված անհամապատասխանության փակման օրը՝ հայտնելով դրա մասին հայտատուին և հրահանգելով շարունակել գործընթացը:

Հայտատուին ներկայացված շտկիչ գործողությունները չիրականացնելու դեպքում համարվում է, որ տեսչության գործընթացն ավարտված է և արտահայտվում է 4-րդ փուլում նկարագրված գործառույթին:

Այն դեպքում, երբ ընդունվում է, որ թերությունները վերացվել են տեսչության ընթացքում, ապա հետևում է գնահատման հաջորդ փուլի գործընթացը:

#### **4. Փաստաթղթերի գնահատման հաշվետվության պատրաստում**

Թերությունները վերացնելուց հետո տեղեկացվում է ԽՂ-ն, ով առաջարկում է հավանություն տալ կամ ընդունել ներկայացված փաստաթղթերը տեսչության գործընթացի ավարտին (տես 4-րդ փուլը):

Եթե փաստաթղթերը, գործընթացները, ձեռնարկները կամ ղեկավար անձնակազմը փոփոխվել են տեսչության ընթացքում, ապա փաստաթղթերի գնահատման ավարտից հետո կպահանջվի դրանց նոր վերջնական գնահատում:

### **Ա.3. ՓՈՒԼ 3՝ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

(147.B.110 a)

Երրորդ փուլով ԽՂ-ն իրականացնում է 147 կազմակերպության “Ֆիզիկական գնահատում”, որպեսզի համոզվի, որ կատարվում են կարգի պահանջները և Ձեռնարկում (ՏՈՒԿՁ) նկարագրված գործընթացները:

**Կոմիտեի պահանջով հայտարարուն պետք է ներկայացնի պատշաճ հաշվեքննության հաշվետվություն:**

#### **1. Տեսչական խմբի նախապատրաստումը**

Նախատեսվում է, որ նախքան ցանկացած ստուգումներ իրականացնելը տեսչական խմբի անդամները պետք է պատշաճ կերպով վկայագրված լինեն և գործեն համաձայն համապատասխան հրամանի: Հետևաբար ԽՂ-ն պետք է հաստատի ինքնությունը և գործունեության կարգը այս փուլում ընդգրկված տեսչական խմբի բոլոր անդամների համար:

#### **2. Ֆիզիկական գնահատման տեսչության նախապատրաստումը**

Նախքան Փարթ-147 կազմակերպության ֆիզիկական գնահատման սկսելը ԽՂ-ն ճշտում է թվականները և բաժանում աշխատանքը տեսուչների միջև (եթե մեկից ավելի են): Դրա համար անհրաժեշտ է՝

- Նույնականացնել ստուգվող հայտատու կազմակերպության կառուցվածքը և/կամ տեղաբաշխումը
- Մշակել ստուգման ծրագիր՝ ներառելով ստուգումների թվականները
- Որոշել յուրաքանչյուր տեսչության ժամանակահատվածը և նշանակված անձանց
- Նախապատրաստել ստուգումների ընթացքում օգտագործվելիք ստուգաթերթերը (նշված են հետևյալ 2.3 բաժնում)

Հայտատուն տեղեկացվում է պլանի մասին, որպեսզի Կազմակերպության համապատասխան պատասխանատու ղեկավարները կարողանան ներկա գտնվել ստուգումների ընթացքում:

#### **3. Տեսչության ընթացքում օգտագործվող ուղեցույց նյութերը**

(147.B.110 a 2, AMC 147.B.110 a (1))

147/Ձ/22-ի 2-րդ մասում նկարագրված է, թե ինչը պետք է ստուգել Փարթ-147 կազմակերպությունում և դիմացը՝ պարտադիր պայմանները: Այդ բաժնում կան տարբեր սյունյակներ, որոնք կարող են օգտագործվել որպես անկախ ցուցակներ յուրաքանչյուր հայտավորված գործունեության համար: Ընդհանուր առմամբ պետք է հաստատել, որ առկա են և՛ միջոցները/նյութերը, և՛ անձնակազմը, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերը:

Կոմիտեի կողմից հաշվեքննություն իրականացնող խումբը կարող է օգտագործել 147/Ձ/22-ի 2-րդ մասի ստուգման ցուցակը, սակայն խորհուրդ է տրվում, որպես հիմք, օգտագործել “Ավիաուսումնական կենտրոնի վավերացման ստուգաթերթը”, որը բերված է “Հավելվածներ” բաժնում:

#### 4. Հաշվեքննության իրականացումը

(AMC 147.B.110 a (1), GM.147.B.110 (5), GM.147.B.110 (4), GM.147.B.110 (6))

Եթե չկան որևէ խոչնդոտներ, ապա հաշվեքննությունը պետք է իրականացվի համաձայն ընտրված տեսչության ծրագրի:

Նախքան ստուգումների սկսելը համապատասխան տեսուչը կազմակերպում է հանդիպում Կազմակերպության ներկայացուցչի և այլ անձանց հետ, որպեսզի հաղորդի հաշվեքննության նպատակը, ոլորտը, ուղին և ժամանակացույցը:

Խորհուրդ է տրվում հաշվեքննությունն իրականացնել ստուգելով ուսուցման իրականացումն ապահովող միջոցների համապատասխանությունը, անցկացնելով հարցազրույց անձնակազմի հետ, ուսուցման նշանակալի դասընթացների նյութերը և նմուշի համար որևէ պատշաճ ուսումնական դասընթացի անցկացումն ու համապատասխանությունը ստանդարտներին: Ուսուցման դասընթացների բոլոր քննությունների ստուգման անհրաժեշտություն չկա, սակայն պետք է ստուգել, ըստ հնարավորության, որևէ մեկ նախնական և մեկ տիպի ուսուցման դասընթացի քննություն:

Հաստատավելիք բոլոր հինական և տիպի ուսուցման դասընթացներն ստուգելու անհրաժեշտություն չկա, բայց անհրաժեշտ է ստուգել ըստ հնարավորության, մեկ հիմնական և մեկ տիպային ուսուցման դասընթաց այնքանով, ինչքան անհրաժեշտ կլինի հաստատելու, որ ուսուցումն անցկացվում է պատշաճ ձևով, բացառությամբ երբ ստուգվող դասընթացի նվազագույն ստուգման ժամանակը չլինի 3 ժամից պակաս: Եթե հաշվեքննության ընթացքում չեն անցկացվում ուսուցման դասընթացներ, պետք է կատարվեն նախապատրաստություններ ավելի ուշ դասընթացի անցկացման ստուգումներ իրականացնելու համար: Եթե նախատեսված է, որ տեխնոսպարկման ուսումնական կազակերպությունը կարող է անցկացնել ուսուցում և քննությունների ընդունում իր հասցեից հեռու համաձայն 147Ա. 145(գ)-ի, ապա Կոմիտեն պետք է ժամանակ-առ-ժամանակ անցկացնի գործընթացի ստուգողական հաշվեքննություն, որպեսզի համոզվի, որ ընթացակարգերն իրականացվում են: Գործնական նկատակառումներով այդպիսի ստուգողական հաշվեքննություններն անհրաժեշտ է անցկացնել, երբ ուսուցումն անցկացվում է ուսումնական հաստատության հասցեից հեռու:

Հաշվեքննություն անցկացնող տեսուչը պետք է համոզվի, որ նրանք տեղեկացված են, որպեսզի հաշվեքննության անցկացումը ուղեկցվի Փարթ-147 վավերացման հայտ ներկայացրած կազմակերպության ղեկավար անձի կողմից: Սովորաբար դա պետք է լինի ներկայացված որակի կառավարիչը: Ուղեկցվելու նպատակն է, որպեսզի վստահ լինի, որ կազմակերպությունը լիովին տեղյակ է հաշվեքննության ընթացքում հայտնաբերված բոլոր թերությունների մասին: Բոլոր դեպքերում ներկայացված որակի կառավարիչը/ կազակերպության ղեկավար անդամը պետք է հաշվեքննության ավարտին համառոտակի տեղեկացված լինի հաշվեքննության ընթացքում հայտնաբերված թերությունների մասին:

Կարող է լինեն հանգամանքներ, երբ հաշվեքննություն իրականացնող տեսուչը հայտատուի կազմակերպությունում կարող է բացահայտել իրավիճակներ, որոնց դեպքում նա համոզված չլինի համապատասխանության հարցում: Այդ դեպքում կազմակերպությունը

պետք է տեղեկացվի հնարավոր անհամապատասխանության մասին հաշվեքննության ժամանակ և այն փաստի մասին, որ իրավիճակը պետք է վերանայվի որոշում ընդունելուց առաջ: Կազմակերպությունը պետք է տեղեկացված լինի որոշման մասին 2 շաբաթվա ընթացքում հաշվեքննության սկզբից, գրավոր, եթե որոշումը հաստատում է անհամապատասխանությունը: Եթե որոշումը համապատասխանության շրջանակներում թերության մասին է, ապա կազմակերպությանը բանավոր տեղեկացնելը բավարար է:

Կազմակերպվում է եզրափակիչ հանդիպում, որի ընթացքում պետք է ներկա լինեն՝

- Կոմիտեի կողմից առնվազն խմբի ղեկավարը և տեսուչը
- Կազմակերպության կողմից՝ պատասխանատու ղեկավարը կամ ներկայացուցիչը և ֆիզիկական գնահատման ընթացքում Կոմիտեի խմբին ուղեկցող պատասխանատու կառավարչի կողմից առաջարկված անձը և որակի պատասխանատուն:

## 5. Անհամապատասխանությունների ընդհանրացում

Հաշվեքննությունն ավարտելուց հետո պետք է սահմանվեն հայտնաբերված թերությունները՝ օգտագործելով վերը նշված ստուգաթերթը (ԹԱԵԳ, Ձև 22, ՄԱՍ 2):

## 6. Հայտատուի տեղեկացումը թերությունների մասին

(147.B.110 b)

Ֆիզիկական տեսչությունն ավարտելուց հետո ԽՂ-ն կազմակերպում է հանդիպում 4-րդ կետում նշված անձնակազմի հետ հայտնաբերված թերությունները ներկայացնելու համար: Հանդիպման ընթացքում պետք է քննարկվեն առնվազն հետևյալ հարցերը՝

- Հանդիպման անդամների ներկայացում
- Բոլոր թերությունների ընթերցումը, որպեսզի կազմակերպության հանդիպմանը ներկա անդամները տեղեկանան և գտնեն համապատասխան շտկիչ գործողություններ
- Անհրաժեշտության դեպքում թերությունների վերացումից հետո երկրորդ տեսչության անցկացում իրական վիճակի գնահատման համար
- Հաշվետվության ներկայացում՝ թերությունների վերացման նշված առավելագույն ժամկետներով, որի պատճենի ստացումը հաստատվում է հայտատուի ներկայացուցչի ստորագրությամբ՝ նշելով թվականը:
- Այդ թվականից սկսած մինչև 15 օր, ըստ պայմանավորվածության, կարող է կասեցվել գործընթացը:
- ԽՂ -ի եզրափակիչ ելույթը:

## 7. Կազմակերպության իրականացրած շտկիչ գործողությունների գնահատումը

Կազմակերպությունը պարտավոր է վերացնել բոլոր թերությունները Կոմիտեի կողմից նշված ժամկետում և պաշտոնական հաղորդագրության միջոցով տեղեկացնել ԽՂ-ին՝

նշելով բոլոր մանրամասները, որպեսզի հնարավոր լինի փակել տվյալ կետերը: Ստանալով այդ տեղեկատվությունը Խումբը գնահատում և որոշում է, թե արդյոք կարելի է փակել տվյալ հարցը:

Լրացուցիչ տեսչության անցկացման անհրաժեշտության դեպքում հայտատուի հետ համաձայնեցվում է դրա անցկացումը ըստ 6-րդ կետի:

Եթե Խմբի կարծիքով որոշ կետեր չեն կարող փակվել, ապա այդ մասին տեղեկացնում են հայտատուին՝ օգտագործելով 147/Ձ/22 ձևաթղթի 4-րդ մասը ինչպես նկարագրված է հաջորդ կետում:

### **8. Փարթ 147 կազմակերպության վավերացման/վավերացման մերժման ձևակարպումը (AMC 147.B.110 (a) 2)**

Բոլոր լրացուցիչ ստուգումներն ավարտելուց հետո դրական արդյունքի դեպքում լրացվում են 147/Ձ/22 ձևաթղթի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերը և տեղեկացվում հայտատուին: Ավելի ուշ կազմակերպվում է հանդիպում, որի ընթացքում վերջնականապես ձևակենսավում են հետևյալ կետերը՝

- Հանվում են գործունեության չհամապատասխանող ոլորտները
- 2-րդ և 3-րդ մասերի հղումները տեղաբաշխվում են ըստ կարգի հաջորդաբար համապատասխան այդ մասերում նշված անհամապատասխանությունների
- “Անհամապատասխանությունները”, մանրամասն նկարագրելով հայտնաբերման վայրը՝ հղում կատարելով նորմերին
- “Հաշվեքննություն իրականացնողի ստորագրությունը և թվականը”՝ հաստատելով ԽՂ-ի և տեսուչի պատասխանատվությունը այդ փաստաթղթի համար
- “Փակման օրը”՝ նշվում է անհամապատասխանության փակման օրը ներկայացված լրացուցիչ փաստաթղթերի կամ նոր տեսչության իրականացման արդյունքի հիման վրա:

Չփակված անհամապատասխանությունների համար անհրաժեշտ կլինի տրամադրել դրանց վերացման հիմնավորված ժամկետ, որը չի գերազանցի մեկ ամիսը և կխախտի վարչարարական գործընթացի ժամկետը: ԽՂ-ն կարող է ավելացնել ժամկետը ևս 15 օրով, եթե փաստացի ապացուցվում է, որ թերությունը չի վերացվել ոչ հայտատուի մեղքով կամ արտակարգ իրավիճակի պատճառով:

147/Ձ/22 ձևը լրացնելուց հետո որոշվում է ժամկետը՝ 10 օրը չգերազանցող, երբ պետք է հայտնել անհամապատասխանություններին համաձայնվել/չհամաձայնվելը:

Սկսելով թերությունների վերացման փուլը Կազմակերպությունը պետք է մշակի շտկումների պլան՝ ներառելով բոլոր մանրամասներն ու հղումները, որը թույլ կտա փակել անհամապատասխանությունները որոշված ժամկետներում և քննարկել այն գնահատման խմբի հետ: Դիտողությունների առկայության դեպքում Խումբը տեղեկացնում է շահառու կողմին՝ հայտնելով, թե ինչ կարգի շտկիչ գործողություններն են ընդունելի:

Թերությունների վերացման ստուգումից կամ ժամկետն անցնելուց հետո, եթե ստուգող խմբի կարծիքով անհամապատասխանությունը չի կարող փակվել, հայտնվում է

կազմակերպությանը նորից, որ դրանք շարունակում են մնալ բաց: Դրա համար օգտագործվում է 147/Ձ/22 ձևի 4-րդ մասը:

Դրանից բացի ստուգվում է բաց մնացած կետերի առկայությունը և լրացվում է նաև 147/Ձ/22 ձևաթղթի 5-րդ մասը: Ձևաթերթի ձևակերպման ավարտին տեղեկացվում է շահառուն, որը 10 օրից ոչ շուտ, բայց 15 օրից ոչ ավել ժամանակահատվածում կարող է ներկայացնել իր տեսակետով արդարացուցիչ փաստաթղթեր: Եթե մինչև ժամկետի լրանալը չեն վերացվում թերությունները, ներկայացվում լրացուցիչ փաստաթղթեր, ապա համարվում է, որ քննարկումն ընդունված է:

Ի վերջո ավարտված 147/Ձ/22 Հաշվետվությունը (որոշման առաջարկություն) կից հղումների և փաստաթղթերի ամբողջ փաթեթի հետ միասին ներկայացվում է Թռիչքային պիտանիության վարչության պետին՝ վարչարարական գործընթացի իրականացման համար:

#### **Ա.4.- IV ՓՈՒԼ՝ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ և ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ**

(147.B.125)

Նախորդ բոլոր փուլերի բավարար ավարտը թույլ է տալիս սկսել 4-րդ փուլը՝ “Վկայականի տրամադրումը” (ԹԱԵԳ, Ձև 11):

Կազմակերպության ղեկավարը ԽՂ-ից ստանում է փաստաթղթերի փաթեթը, որոնք անհրաժեշտ են վարչարարական գործընթացի վերջնական որոշման համար առնվազն 3 օր առաջ, որպեսզի որոշվի և տեղեկացվի գործընթացի մասին:

#### **1. ՓԱՐԹ-147 վկայականի տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ստացումը:**

Փարթ-147 վկայականի տրամադրման կամ մերժման համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը՝

- Հայտի 147/Ձ/12 ձևի բնօրինակը կամ պատճենը
- ԽՂ-ի և խմբի կողմից պատշաճ կերպով ձևակերպված ղեկավար անձնակազմի 147/Ձ/04 ձևաթերթերը
- Ավարտված և ստորագրված 147/Ձ/22 ձևը
- ՏՈՒԿԶ-ի հաստատման առաջարկությունը ԽՂ-ի կողմից
- Կազմակերպության ձեռնարկը (ՏՈՒԿԶ).
- Վավերացման Վկայական և ցանկ՝ ձև 147/Ձ/11
- Ընթացիկ վերստուգումների ծրագրի առաջարկություն (տես Բ բաժինը)

Այդ փաստաթղթերի առկայության դեպքում ԽՂ-ն պետք է հաստատի դրանց պատշաճությունը, որպեսզի բացառվեն հակասությունները:

Այդ փաստաթղթերը կամ պատճենները կարող են ստացվել թղթային կամ էլեկտրոնային տարբերակով:



## **2. Հաստատման վկայականի և ՓԱՐԹ 147 գործունեության ցանկի նախապատրաստումը**

Ձևակարպման ընթացքում պահպանվում են հետևյալ կանոնները՝

- “Հղումները” համապատասխանում են 147/Ձ/22 ձևի հղումներին 147/Ձ/22.
- “Կազմակերպության անվանումը” նշվում է անվանումը, որը հայտատուն նշել է իր հայտում:
- “Վավերացման կից ցանկի թվականը” այդ ցանկի ընդունման օրը/ամիսը/տարին
- “Ուժի մեջ մտնելու թվականը” Վկայականի թվականը (օրը/ամիսը/տարին)
- “Լիազորված անձի ստորագրությունը և անունը” Կազմակերպության պատասխանատու անձը ստորագրում է այդ փաստաթուղթը, երբ գրառվում է լրիվ անունը պաշտոնը, (եթե դա նախատեսված չէ ձևաթղթով) ներքին մասում:
- “Դաս” սյունյակում նշվում են միայն ընդունելիները, օրինակ, եթե Կազմակերպությունը միայն տիպի/առաջադրանքի ուսուցման դասի է, ապա հեռացվում են հիմնական դասին վերաբերվող տողերը: Այդ դասերը պետք է համընկնեն հայտում նշվածին և դրական գնահատված լինեն Կոմիտեի խմբի կողմից:
- “Արտոնություններ”-ի սյունյակում նշվում են միայն նրանք, որ ընդունելի են ՓԱՐԹ 147 կազմակերպության համար
- “Սահմանափակումներ” սյունյակում հնարավորինս ճշտգրիտ նշվում է թռիչքային ապարատի տեսակը, սերիան, որոնց վերաբերյալ կազմակերպությունը կարող է աշխատանքներ իրականացնել:

Արտոնությունների նախապատրաստման համար օգտագործվում է 147/Ձ/11 ձևի երկրորդ էջը:

## **3. Որակի ստուգումը և պաշտոնական փաստաթղթերի ստորագրումը**

Ժամկետի ավարտին ԽՂ-ն ներկայացնում է Թռիչքային պիտանիության վարչության պետին ավարտված զեկույցը՝ կից ներկայացնելով պատշաճ կերպով ձևակերպված 147/Ձ/22, 147/Ձ/04 և 147/Ձ/11 ձևաթղթերը, որը ընդունվում է որպես հաստատման առաջարկություն: Թռիչքային պիտանիության վարչության պետը ստուգում է 147/Ձ/22-ի լրացման որակը և համոզվելով, որ տեսչությունն իրականացված է գործող կարգի համապատասխան, ստորագրում է հետևյալ փաստաթղթերը՝

- Տեխսպասարկման ուսումնական կազմակերպության հաստատման Փարթ-147 վկայականը (ձև 147/Ձ/011)
- Տեխսպասարկման ուսումնական կազմակերպության ղեկավար անձնակազմի հաստատումը (147/Ձ/04 ձևեր)
- Պատասխանատու կառավարչի և ձեռնարկի հաստատում (ՏՈՒԿՁ-ի հաստատում):

## **4. Փաստաթղթերի ուղարկումը Փարթ-147 Կազմակերպություն և պահպանումը արխիվում**

(147.B.125, 147.B.20)

Վավերացման վկայականը և թույլատրված գործունեության ցանկը ստորագրելուց հետո պատճենահանվում են ԽՂ-ի կողմից և բնօրինակները ուղարկվում են ՓԱՐՏ 147 կազմակերպություն:

Ավարտելով սերտիֆիկացման գործընթացը փաստաթղթերի ամբողջ փաթեթը պահվում է Թոփքային պիտանիության վարչությունում, անհրաժեշտության դեպքում գործընթացի ամբողջականությունը ստուգելու համար:

### **5. ՓԱՐԹ-147 կազմակերպության վերահսկման ծրագրի հաստատումը**

ՓԱՐՏ 147 կազմակերպության վավերացումից հետո պետք է հաստատվի այդ կազմակերպության վերահսկման ծրագիրը համաձայն սույն կարգի Բ բաժնի (“Վերահսկում”):

Այդ նպատակով լրամշակվում է Կոմիտեի տարեկան վերահսկման պլանը:

## **Ա.5.- Վ ՓՈՒԼ՝ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄ**

Բացառության կարգով ԽՂ-ի ներկայացմամբ կամ կազմակերպության խնդրանքով հնարավոր է երկարացնել գործընթացի տևողությունը կիսով չափ (1,5 ամսով), ըստ իրավիճակի և եթե չեն ոտնահարվում երրորդ կողմի շահերը:

Ինչպես երկարաձգման մասին խնդրանքը, այնպես էլ երկարաձգման մասին որոշումը պետք է տեղի ունենան նախքան նշանակված ժամկետի ավարտը: Ոչ մի դեպքում արդեն անցած ժամկետը չի կարելի երկարաձգել:

Երկարաձգումը պետք է հիմնավորված լինի և հաստատվի Կոմիտեի նախագահի կողմից՝ սահմանելով երկարաձգման ժամկետը: Այդ մասին տեղեկացվում են շահառու կողմերը:

## **ԲԱԺԻՆ Բ՝ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ**

### **Բ.1.- Ի ՓՈՒԼ՝ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ**

(147.A.155 a 147.B.120)

Ինչպես նշվեց Ա բաժնի 4-րդ փուլի վերջում Փարթ-147 կազմակերպության վավերացումից հետո պետք է հաստատվի վերահսկման ծրագիր, որը կապահովի վերահսկում և իրականացվող ստուգումների թվականները

Վավերականության պահպանման ծրագիրը պետք է մշակվի հաշվեքննության ԽՂ-ի կողմից և ներկայացվի Թոփքային պիտանիության վարչության վերլուծությանը և

հաստատմանը: Վերահսկման ծրագիրն ընդգրկում է երկու տարվա փուլ և յուրաքանչյուր փուլի ավարտին պետք է ներկայացվի նոր ծրագիր:

### **1. Տեսուչի նշանակումը Փարթ-147 կազմակերպության վավերականության պահպանման վերահսկման համար**

Թռիքային պիտանիության վարչության պետը նշանակում է տեսուչի Փարթ-147 կազմակերպության վավերականության պահպանման վերահսկման և ծրագրի իրականացման համար:

Տեսուչները պետք է փոխարինվեն առնվազն 4 տարին մեկ անգամ:

### **2. Վավերականության պահպանման ծրագրի մշակումը**

(147.B.120 a)

Ծրագիրը մշակելիս ղեկավարվում են նրանով, թե ինչ կարգի ու ծավալի վավերացում է ստացել Փարթ-147 կազմակերպությունը:

Այդ ծրագրով սահմանվում է, որ՝

- Կազմակերպության լիովին ստուգումը պետք է ավարտվի առավելագույնը 24 ամսվա ընթացքում:
- Նորմալ ընթացիկ վերահսկման համար տեղային այցելությունների հաճախականությունը պետք է լինի նվազագույնը՝
  - տարին մեկ (1) այց Տիպի ուսուցման հաստատված կազմակերպության համար,
  - տարին երկու (2) այց Նախնական ուսուցման հաստատված կազմակերպության համար:

*Ծանոթություն՝ Չի պահանջվում իրականացնել բոլոր հաստատված տեղամասերի հաշվեքննություն ամեն տարի, սակայն պլանը պետք է նախատեսի այդ բոլոր տեղամասերի ստուգումը 2 տարվա փուլի ընթացքում:*

*Կազմակերպությանը նախօրոք տեղեկացնելու հարցը որոշում է տեսուչը:*

### **3. Վավերականության պահպանման ծրագրի փոփոխությունները**

Ըստ Փարթ-147 կազմակերպության ներկայացրած իր վավերացման փոփոխությունների (նվազագույն փոփոխություններ կամ նշանակալի փոփոխություններ, որոնք հաշվի են առնված չափանիշներում) պետք է փոփոխվի Վավերականության պահպանման ծրագիրը, նոր իրավիճակին դրա համապատասխանության կամ Փարթ-147 կազմակերպության վավերացմանն հասնելու համար:

Այդ դեպքում ծրագրի մշակված փոփոխությունը ներկայացվում է Թռիքային պիտանիության վարչության պետի հաստատմանը:

### **Բ.2.- II ՓՈՒԼ՝ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ**

(147.A.155 a, 147.B.120)

### **1. Կոմիտեի գնահատող խմբի որոշումը**

Վավերականության պահպանման ծրագրում նշված կետերը իրականացվում են այդ ծրագիրը մշակող ԽՂ-ի կողմից, ում կարող են ուղեկցել այլ տեսուչներ՝ կազմակերպության ծավալներից առկախ:

Նախատեսվում է, որ ցանկացած տեսչություն իրականացնելիս տեսուչը պետք է ունենա համապատասխան վկայական և հրաման, որում նշված կլինեն ստուգման ժամկետները և տիպը:

### **2. Հաշվեքննության նախապատրաստումը**

Տեսուչը պետք է՝

- Ընտրի ստուգաթերթերը, որոնք օգտագործվելու են ստուգումների ընթացքում (տես հետևյալ 3-րդ բաժինը)
- Տեղեկացնի Կազմակերպությանը, (եթե գտնում է, որ դա անհրաժեշտ է), ստուգման ծրագրի մասին, որպեսզի 147 կազմակերպության համապատասխան ղեկավար անձիք ներկա լինեն ստուգումների ընթացքում:

### **3. Հաշվեքննության ընթացքում օգտագործվող ուղեցույցները**

Հաշվեքննության իրականացման ընթացքում, ըստ Վերահսկման ծրագրի, կարելի է օգտագործել ուղղակի 147/Ձ/22 ձևի 2-րդ մասը:

### **4. Հաշվեքննության իրականացումը**

Եթե լրացուցիչ ստուգման պատճառներ չկան, ապա ստուգումն իրականացվում է ըստ Վերահսկման ծրագրի:

Տեսուչը կարող է խնդրել կազմակերպության համապատասխան պատասխանատու ղեկավարի ներկայությունը: Մինչև գործընթացի սկիզբը տեսուչը ունենում է նախնական հանդիպում Կազմակերպության ներկայացուցչի և մնացած անդամների հետ, որպեսզի հաղորդի այցի նպատակը, ստուգման շրջանակները, ուղղությունը և ժամանակացույցը:

### **5. Թերությունների ընդհանրացում**

Ավարտելով ստուգումները, հայտնաբերված բոլոր թերությունները ներկայացվում են հանդիպման ընթացքում, որը նկարագրված է 6-րդ կետում: Արդյունքները ձևակերպվում են հաշվեքննության փաստաթղթով (147/Ձ/22-ի 4-րդ մաս)

### **6. Կազմակերպության թերությունների տեղեկացումը և Կոմիտեի կողմից կիրառվող միջոցները**

(147.A.160, 147.B.130, AMC 147.B.130 b)

Ստուգումներն ավարտելուց հետո տեսուչը հանդիպում է կազմակերպության պատասխանատու անձնակազմի հետ, որպեսզի ներկայացնի և փոխանցի թերությունները (147/Ձ/22 ձևի 4-րդ մասի միջոցով), մատնանշի այն միջոցները, որոնց կիրառումով պետք է

դրանք արդյունավետ և ժամանակին վերացնել (147/Ձ/22 ձևի 4-րդ մասում նշված), ինչպես նաև այն գործողությունները, որոնք կարող են կիրառվել Կոմիտեի կողմից Վավերացման առնչությամբ (վերացում, դադարեցում կամ լրիվ/մասնակի սահմանափակում) անհրաժեշտության դեպքում:

Հարցերը, որոնք վերոհիշյալ հանդիպման ժամանակ պետք է քննարկվեն, արնվազն հետևյալն են՝

- Նախաբան
- Յուրաքանչյուր թերության ընթերցում, որպեսզի Կազմակերպության ներկա անձնակազմը տեղեկանա և կարողանա գտնել համապատասխան շտկիչ գործողություն
- Ձևակերպված փաստաթղթի (147/Ձ/22 ձևի 4-րդ մաս) ներկայացում, որի պատճենը պետք է ստորագրի Կազմակերպության ներկայացուցիչը: Հայտնվում է տրամադրված առավելագույն ժամկետը 2-րդ մակարդակի թերությունների վերացման համար (6 ամսից ոչ ավել), ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, Վավերացման նկատմամբ կիրառվող միջոցները (1-ին մակարդակի թերություններ): Ցանկացած պահի հնարավոր է կիրառել բացառիկ միջոցներ, եթե առկա է թոհիչքային անվտանգության վրա անմիջական ազդեցության վտանգ: Եթե հնարավոր չի եղել դրա մասին զեկուցել անմիջապես, ապա այն իրականացվում է հետագայում համաձայն կարգի:
- Հայտնել, որ կազմակերպությունը 10 օրից ոչ ավել ժամանակահատվածում կարող է արտահայտել իր համաձայնությունը/անհամաձայնությունը ներկայացված թերությունների վերաբերյալ՝ ներկայացնելով պատշաճ հղումներ: Եթե մինչև ժամկետի ավարտը Կազմակերպությունը չի ներկայացնում հղումներ, նոր փաստաթղթեր կամ արդարացումներ, ապա իրականացվում է որոշումը: Փաստաթուղթը ստորագրելուց հրաժարվելը գնահատվում է որպես անհամաձայնություն:
